



Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԺՈՂՈՎՈՒՐԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱՐԱՆՈՎ.— Մշակութային կապերի, գիտական փորձի փոխանակման, հասարակական գործիչների անձամբ տված այցելություններով օրեցօր ավելի ամրապնդվում է բարեկամությունը ժողովուրդների միջև: Երևանի Պետական համալսարանն ընդարձակում է իր կապերը արտասահմանյան բույր հիմնարկների հետ փոխայցելություններով:

Փոխհարաբերությունները առանձնապես մտերմական են Չեխոսլովակյան Ռեսպուբլիկայի մայրաքաղաք Պրագայի համալսարանի հետ:

Պրագայի համալսարանը ունի հայագիտական ամբիոն, որի վարիչը՝ պրոֆեսոր Եղիշիկան, անցյալ տարի հյուր էր Երևանում: Չեխ երիտասարդ ուսանողներ նրա ղեկավարությամբ ուսումնասիրում են մեր հնադարյան լեզուն, կատարում քարոզամուսնություններ հայ մեծանուն հեղինակներից: Նրանք Հայաստանի Պետական համալսարանին գրած իրենց նամակներում հիացմունքով են խոսում մեր բազմադարյան մշակույթի և պատմության մասին: Հայաստանի Պետական համալսարանը, ի պատասխան այդ հետաքրքրության, Պրագա է ուղարկում նրանց հետաքրքրող բազմաթիվ գիտական հրատարակություններ:

Վերջերս Երևանում հյուր էր եկել ընդհանուր լեզվաբանության դոկտոր Պրագայի համալսարանի դասախոս պրոֆեսոր Վլադիսլավ Սկալիչկան: Նա միջազգային համրավի տեր գիտնական է և հեղինակ բազմաթիվ հայտնի լեզվագիտական աշխատությունների: Նա համալսարանի հայկական բանասիրական ֆակուլտետի 4-րդ և 5-րդ կուրսերի ուսանողության համար կարգաց երկու շահեկան դասախոսություն՝ «Լեզուների տիպոլոգիան» քննադով:

ԿՈՄՄՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱՄ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Կոմիտասի անունը Սովետական Հայաստանում ամենից շատ սիրված անուններից մեկն է: Այդ անունով է կոչվում մայրաքաղաքի լավագույն զբոսայգիներից մեկը, որտեղ կա անմահ Կոմիտասի դամբարանը, նրա անունով է կոչվում Երևանի զեղեցկագույն փողոցներից մեկը, երաժշտական դպրոցը, կվարտետը և այլն:

Երևանում, Հայֆիլհարմոնիայի փոքր զահլիճում, մայրաքաղաքի հասարակայնությունը հանդիսավորապես նշեց Կոմիտաս վարդապետի ծննդյան 90-ամյակը: Զերմ ու սրտառուլ զեկուցումով հանդես եկավ Յ. Բրուտյանը: Զեկուցումից հետո կատարվեցին Կոմիտասի ստեղծագործությունների լավագույն նմուշներից: Հարգանքի նման մի երեկո էլ կազմակերպվել էր Մայր Աթոռում, որտեղ հանդես եկավ Պետական երգեցիկ խումբը՝ Ն. Սնգրյանի ղեկավարությամբ: Հանդիսականներին զեկուցեց Յ. Բրուտյանը՝ Կոմիտաս վարդապետի անձի ու գործի մասին:

ՉԻԿ ԴԱՄԱԴՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Ռուսինիայից հյուրաբար Հայաստան էր ժամանել ծաղրանկարիչ Չիկ Դամադյանը: Նա հայտնի է որպես բաղադրական ուժեղ ծաղրանկարիչ: Ի պատիվ վարպետ ծաղրանկարչի, Կերպարվեստագետների միությունը կազմակերպել էր երեկո Արվեստի աշխատողների տանը: Երեկոն բացեց Կերպարվեստագետների միության նախագահ Ռ. Պարսամյանը: Այնուհետև նկարիչ Մհեր Արևիդյանը ներկայացրեց հյուր արվեստագետի կյանքն ու գործունեությունը: Պատասխան շնորհակալության խոսքով հանդես եկավ ծաղրանկարիչ Դամադյանը և ասաց, «Մեկ շարաքվա ընթացքում ես հնարավորություն գտնեցա ծանոթանալու հիանալի Հայաստանին, եղա նրա տեսարժան վայրերում, Մարտիրոս Սարյանի, Արա Սարգսյանի, Մհեր Արևիդյանի, Խաչատուր Եսայանի արվեստանոցներում: Տեսա, թե ինչպես է ստեղծվում հայ կերպարվեստը, ինչպես է զարգանում. ինքս գրաֆիկ եմ, բայց նրանց աշխատանքները տեսնելուց հետո, եթե մի ամիս մնամ, պիտի նկարիչ դառնամ, որովհետև այդ աշխատանքներում Հայաստանի արևն է, Հայաստանի սառն օդը, այդտեղ նրա խաղաղ աշխատանքով ու վիթխարի նվաճումներով ապրող մարդիկ են: Խորապես զգացված եմ այս ջերմ ընդունելության համար և հուզված: Ոչ մի խոսք չի կարող բովանդակել հուզումի վայրկյանները: Ես բառեր չեմ գտնում սանլու...»:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆՆԵՍ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Երևանում մի տարի է, ինչ գործում է Արվեստի ինստիտուտի կիրառական արվեստի բաժան-

մուտքը: Այնտեղ հմուտ արվեստագետներ, հիմնվելով ուրարտական և հին հայկական արվեստի մոտիվների վրա, նոր բովանդակությամբ և արդիական ճաշակով ստեղծում են այլևայլ տեսլիկ առարկաներ, զարդեր: Կիրառական արվեստի բաժանմունքը վերջերս կազմակերպել էր ցուցահանդես, որն իր տեսակի մեջ առակերպել էր Ուշագրավ էին բյուրեղապակյա, կերամիկայից պատրաստված տեսլիկ այլևայլ առարկաների նմուշները, կերամիկայից պատրաստված արձանիկները, արծաթադրո՞ղ զարդերը:

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱՋՑԱՆԻ ՄՆԵՆԴՅԱՆ 70-ԱՄՑԱԿԻՆ
 Նվիրված ՆՐՆԿՈՒՄ.— Ընկերներին 26-ին նշվեց հայ մշակույթի փայլուն գործիչներից մեկի՝ հայ բեմի մեծատաղանդ վարպետ Վահրամ Փափաջյանի ծննդյան 70-ամյակը: Հանդիսավոր նիստը տեղի ունեցավ Գ. Սունդուկյանի անվան պետական գրամատիկական թատրոնում, որտեղ հավաքվել էին մայրաքաղաքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ, արվեստի և գրականության աշխատողներ, բանվորներ ու ծառայողներ: Կային նաև Աղբրեշանից, Վրաստանից, Լատվիայից և ՌՍՖՍՐ-ից եկած հյուրեր:

Հանդիսավոր երեկոն բաց է անում Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստր Ա. Ծահինյանը, Վահրամ Փափաջյանի կյանքի և գործունեության մասին ղեկուցում է բանասիրական գիտությունների թեկնածու, թատերագետ Ռ. Զարյանը:

Հորելյարին ողջույնի շերտ խոսքեր ուղղեցին ժողովրդական արտիստ Վարդան Աճեմյանը, բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը և եղբայրական ռեսպուբլիկաներից եկած արվեստի շատ ներկայացուցիչներ:

Վ. Փափաջյանը ճանաչված արվեստագետ է ոչ միայն Հայաստանում: Այդ են վկայում հորելյանի առթիվ Սովետական Միության տարբեր վայրերից ու քաղաքներից ստացված ողջույնի բազմաթիվ հեռագրերը:

Երեկոյի վերջում Վ. Փափաջյանը իր հայրենաշունչ ճառով շնորհակալություն հայտնեց հայ ժողովրդին, հայրենի կառավարության և բոլոր թատերասերներին՝ իրեն ընծայված այդ բարձր հարգանքի և ուշադրության համար:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՃԱՄԵՆՈՒՄ.— Այս տարի ևս ծավալվեցին հնագիտական պեղումները Սևանա լճի շրջից արդատված Լճաշենի հողերում, որոնք տվեցին հնագիտական արժեքավոր նույնություններ: Պեղումները տեղեցին մոտ երկու ամիս: Պեղվեցին ավելի քան 18 դարանաբալուրներ (Ի—ՇՁ դար Ն. Բ.):

Դամբարանները կառուցվել էին ուղղակի գետնի կտրվածքում, առանց քարի պատերի և ծածկվել էին փայտով և քարաբլուրով: Ժամանակի ընթացքում, փայտերի փտուլու հետևանքով, քարերը փուլ են եկել և շարժուտել գերեզմաններում գտնվող իրերը: Դամբարաններում հայտնաբերվեցին մարզկային ոսկորներ: Այդ դարերի դամբարաններում առաջին անգամ են հանդիպում մարզկային ոսկորներ և բրուտազործական այնպիսի իրեր, որոնք անծանոթ են մեր հնագիտությանը, ինչպիսիք են կերամիկական առարկաներ, մետաղյա զարդեր և զենքի մնացորդներ: Կերամիկական իրե-

րը դրսից պատվել էին սև փայլաներով, զարդարված տարբեր բնույթի երկրաչափական խորաբանգակներով: Մետաղե իրերը և զարդերը հազվադեպ էին:

Մինչև այս պեղումները, հազարամյակներ խավարի մեջ էր մնացել Ի—ՇՁ դարերի (Ն. Բ.) վերաբերող նյութական կուլտուրայի պատմությունը, որը պղնձե դարի անմիջական շարունակություն է կազմում: Այս պեղումների ընթացքում լույս աշխարհ հանված հարուստ նյութերի հիման վրա այժմ կարելի է ուսումնասիրել այդ ժամանակաշրջանի տեղաբնիկ ժողովուրդների պատմությունը, նրանց կենցաղն ու մշակույթը:

ՁՆՌԱԳԻՐ ԳԱՆՁՆԻ ԱՆՄԱՏՉՆԻ ԹԱՐԱՅՐՈՒՄ.— Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարանի) կազմակերպած գիտաբանական ղեկավարությամբ գիտական աշխատող Ս. Քոլյանցյանի և մասնակցությամբ Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ավիանիտների ավել է ուշագրավ արդյունքներ: Գիտաբանական ժողովը կողմնակալ անմատչելի քարայրում հայտնաբերել է Թ—ՇԾ դարերին վերաբերող ձեռագիր գրքերի մնացորդներ, որոնց թիվը հասնում է 40-ի, կարասի զանազան կտորներ և այլ իրեր: Գրքերի այս մնացորդները մի մասն են եղել այն ձեռագրերի, որով ժամանակին հարուստ են եղել Հաղբաթի և Սանահնի վանքերի մատենադարանները: Նախատեսված է նաև 1960 թվականին շարունակել պեղումները Հաղբաթ—Սանահնի ձորերի քարայրներում:

ՆՎԱՐԻՉ ԽԱՋԻԿ ԵՍԱՅԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ՆՎ ՀԻՄՆԱՄՑԱԿԸ.— Հայաստանի անվանի նկարիչներից մեկն է Խաչիկ Եսայանը: Նրա նկարները դիտելիս ապրում են հայրենի աշխարհի գեղեցկությունը, բնության այլազան երևույթները, որոնք բնիկ են նայում տարվա տարբեր եղանակների զգեստավորումով: Զգում են, որ թաղանթանյ գարունների, օսկետերև աշունների, հեղաձուլված բարձրների և զովասուն երեկոների մի հարուստ բնաշխարհում են գտնվում:

Ցուցահանդեսը նվիրված էր նկարչի ծննդյան 50-ամյակին: Ուշագրավ էին ծաղիկների նատյուր-մորտերը, հուզականությամբ թափափուն բնանկարներում լավատես կյանքն է շնչում (սՎաղ գարուն», «Երեկո», «Առավոտը Սևանում», «Գառնի կիրճը աշնանը» և այլն): Եսայանը տիրապետում է գույների ներդաշնակությամբ կյանք ու գեղեցկություն պտղոճեղու արվեստին: Ուշագրավ էին նաև «Երվիթ-Բեկ» օպերայի համար Եսայանի պատրաստած գեկերատիվ էսքիզները: Եսայանի սիրած ժանրերից մեկն էլ քաղաքային պեյզաժն է և իր արվեստին ու ռեժիսորին հարազատ այս բնագավառում ևս նա աշխատում է շնչուն պատկերավոր մոտիվն ոչ միայն լիբրիկական տրամադրությունը, այլև մեծ օրերի, նոր քաղաքի մեծաշունչ պոետիան զննել նրա մեջ:

Ընկերներին 10-ին, ի պատիվ անվանի նկարչի կայացած մեծամասն երեկոյին, ներածական հավիճ խոսք ասաց Մ. Ստրյանը: Նկարչի Գույրչյանը ներկայացրեց Եսայանի անցած նկարչական ուղին: Լսվեցին արվեստի բազմաթիվ բնագավառների ներկայացուցիչների

